Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 03-04-2023 թ. որոշմամբ
ՀՀ «ԱՐՄԵՆԻԱՆ ՖՅՈՒՉՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2022 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԱՐՄԵՆԻԱՆ ՖՅՈՒՉՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊՈՂ. 1
1.3 Պետական գրանցման համարը		222.160.1031411
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2018-08-07
1.5 ՀՎՀՀ-ն		02680994
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)11408608
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		meruzhbadalyan@gmail.com
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Մերուժան Բադալյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	1	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Լուսագյուղ գյուղի զարգացման համար	93,377,162
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	

9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
«Լուսագյուղ գյուղի զարգացում» ծրագիր	111,117,517	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	111,117,517	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	111,117,517	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 32 էջերից:

էջերի քանակը

Digitally signed by MARTIROSYAN TIGRAN 2010740092
Date: 2023.06.02 15:45:56 AMT

Հիմնադրամի ղեկավար _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«ԱՐՄԵՆԻԱՆ ՖՅՈՒՉՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Audit ARMENIA

Բովանդակություն

3 Անկախ աուդիտորական եզրակացություն

6 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

7 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

8 Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

9 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

10 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «ԱՐՄԵՆԻԱՆ ՖՅՈՒՉՐ» Բարեգործական Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՐՄԵՆԻԱՆ ՖՅՈՒՉՐ» Բարեգործական Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ կամ Կազմակերպություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2022թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:
Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Հիմնադրամի 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Փոքր և Միջին Կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների:
Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի

Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:
Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:
  Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները՝ ինչպես նաև

ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ
10 մայիսի, 2023թ.
Ք. Երևան

Աննա Ավետիսյան

Տնօրեն-Բաժնետեր
Աուդիտի ղեկավար

«ԱՈՒԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ»
«AUDIT ARMENIA»
«АУДИТ АРМЕНИЯ»
01569467

«ԱՐՄԵՆԻԱՆ ՖՅՈՒՉՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	15,803	16,670
		15,803	16,670
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	5	115,271	102,503
Տրված կանխավճարներ		32	653
Դրամական միջոցներ	6	9,812	21,433
		125,115	124,589
Ընդամենը ակտիվներ		140,918	141,259
Հիմնադրամին վերագրելի զուտ ակտիվներ		121,085	122,115
		121,085	122,115
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	7	15,803	16,670
		15,803	16,670
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	9	4,030	2,474
		4,030	2,474
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		140,918	141,259

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2023թ. մայիսի 10-ին՝

Գլխավոր տնօրենի ժ/պ — Ֆինանսական պատասխանատու

Մերուժան Բաղայան — Նվարդ Կարապետյան

«ԱՐՄԵՆԻԱՆ ՖՅՈՒՉՐ»
"ARMENIAN FUTURE"
"АРМЕНИАН ФЮЧЕР"
02680994

«ԱՐՄԵՆԻԱՆ ՖՅՈՒՉՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Նվիրաբերությունից եկամուտներ	8	93,377	14,841
Շնորհից եկամուտ		867	867
Գործառնական ծախսեր	10	(101,392)	(45,738)
Գործառնական գործունեությունից արդյունք		(7,148)	(30,030)
Փոխարժեքային տարբերությունից եկամուտ	11	6,118	(2,613)
Տարվա արդյունք		(1,030)	(32,643)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		(1,030)	(32,643)

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2021թ հունվարի 1-ի դրությամբ	154,758	154,758
Տարվա արդյունք	(32,643)	(32,643)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(32,643)	(32,643)
2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	122,115	122,115
Տարվա արդյունք	(1,030)	(1,030)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(1,030)	(1,030)
2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	121,085	121,085

«ԱՐՄԵՆԻԱՆ ՖՅՈՒՉՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	(1,030)	(32,643)
Ճշգրտումներ		
Շահութահարկի գծով ծախս	-	-
Շնորհից եկամուտ	(94,244)	(15,708)
Մաշվածության ծախս	867	867
Փոխարժեքային տարբերությունից եկամուտ/ծախս	(6,118)	2,613
Գործառնական վնաս նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	(100,525)	(44,871)
Դեբիտորական պարտքերի փոփոխություն	621	(621)
Պաշարների փոփոխություն	(12,768)	(5,371)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	1,556	779
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	(111,116)	(50,084)
Վճարված շահութահարկ	-	-
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(111,116)	(50,084)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	-	-
Ակտիվներին/եկամուտներին վերաբերող շնորհներ	93,377	14,841
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	93,377	14,841
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
	-	-
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	-	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	(17,739)	(35,243)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	6,118	(2,613)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	21,433	59,289
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	9,812	21,433

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«ԱՐՄԵՆԻԱՆ ՖՅՈՒՉՐ» Բարեգործական Հիմնադրամը (այսուհետ Հիմնադրամ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2018թ. օգոստոսի 7-ին, գրանցման համար՝ 222.160.1031411:

Հիմնադրամի հիմնադիրները պատասխանատվություն չեն կրում իրենց ստեղծած Հիմնադրամի պարտավորությունների համար: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում իր հիմնադիրների պարտավորությունների համար:

Հիմնադրամի կառավարման մարմիններն են.

- Հոգաբարձուների խորհուրդը (Խորհուրդ),
- Հիմնադրամի գործադիր տնօրենը

Հիմնադրամի հիմնական նպատակն է՝

- քաղաքային, գյուղական համայնքների և Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև այլ պետությունների սոցիալ-տնտեսական, մշակութային, գիտակրթական, առողջապահական, անվտանգության զարգացման հիմնախնդիրների լուծմանը և դրան ուղղված պետական, միջազգային և այլ ծրագրերին ու միջոցառումներին աջակցություն,
- մշակույթի պահպանման տարածման ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում և մշակույթի գործիչների սոցիալական պաշտպանության իրականացում,
- նպաստել գյուղական և քաղաքային համայնքների համար կարևոր նշանակություն ունեցող հուշարձանների վերականգնմանը, վերանորոգմանը կամ տեղադրմանը,
- նպաստել գյուղական և քաղաքային համայնքներում տնտեսության զարգացման, համայնքային և պետական նշանակության ենթակառուցվածքների ստեղծման, ինչպես նաև ցանկացած այլ տեսակի գործունեության իրականացմանը, որ խթան կհանդիսանա գյուղական և քաղաքային համայնքների զարգացմանը,
- աջակցել ՀՀ-ում առողջապահության, տրանսպորտի, մշակույթի, կապի, տեղեկատվական տեխնոլոգիաների, էներգետիկայի, բնապահպանության, արդարադատության, մտավոր սեփականության, իրավական դաշտի, արդյունաբերության, գյուղատնտեսության, ինչպես նաև անվտանգության խնդիրների լուծմանը:

2022թ. Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 1 մարդ (2021թ.՝ 1 մարդ):

Հիմնադրամի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1:

2. Պատրաստման հիմունքներ

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՓՄԿ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՓՄԿ ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

ՓՄԿ ՖՀՄՍ-ները ներկայումս չեն պարունակում ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ հատուկ ուղեցույցներ: Եթե ՓՄԿ ՖՀՄՍ-ն ուղղորդում չի տրամադրում շահույթ չհետապնդող կազմակերպություններին կոնկրետ գործարքների հաշվառման վերաբերյալ, հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Կազմակերպության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Կազմակերպության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՓՄԿ ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Կազմակերպության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:
Նշանակալի ոլորտները, որոնք ներառում են ավելի բարձր աստիճանի դատողություն, որտեղ ենթադրություններն ու գնահատումները կարևոր են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտվում են ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում:

2.5 Ֆինանսական հաշվետվությունների կազմը

Ֆինանսական հաշվետվություններում ներառված են՝

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին դասակարգմամբ.
բ) ֆինանսական արդյունքի մասին մեկ հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Կազմակերպությունը ներկայացնում է շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ օգտագործելով դրանց բնույթի վրա հիմնված դասակարգումը.
գ) դրամական հոսքերի մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է՝ օգտագործելով անուղղակի մեթոդը: Վճարված տոկոսները դասակարգվում են որպես գործառնական, ստացված տոկոսներն ու շահաբաժինները՝ որպես ներդրումային գործունեությունից առաջացող դրամական հոսքեր: Վճարված հարկերը դասակարգվում են որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքեր:
դ) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագրից և այլ բացատրական տեղեկատվությունից.
Ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր գումարների՝ նախորդ ժամանակաշրջանի (նախորդ տարի) համադրելի տեղեկատվությունը: Երբ Կազմակերպությունը իր ֆինանսական հաշվետվություններում փոփոխում է հոդվածների ներկայացումը կամ դասակարգումը, ապա վերադասակարգում է համադրելի գումարները, բացի այն դեպքերից, երբ վերադասակարգումն անիրագործելի է:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ("ՀՀ ԿԲ") կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը.

Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքները.

	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլար	393.57	480.14
Եվրո	420.06	542.61

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Հիմնական միջոցների օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցների՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր, շինություններ /եկեղեցի/	20 տարի,
Մեքենաներ և սարքավորումներ	1 տարի
Տրանսպորտային միջոցներ	8 տարի
Արտադրական, տնտեսական գույք	8 տարի:

3.3 Պաշարներ

Սկզբնական ճանաչման պահին պաշարները չափվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:
Ձեռքբերման ծախսումներն են ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը և հարկերը (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են կազմակերպությանը ետ վերադարձման), ինչպես նաև տրանսպորտային, բեռնման, բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների, նյութերի և ծառայությունների ձեռքբերման հետ: Ձեռքբերման ծախսումները որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները և նմանատիպ այլ հոդվածներ հանվում են:
Վերամշակման ծախսումները ներառում են արտադրանքի վերամշակման հետ ուղղակիորեն կապված ծախսումները, ինչպիսիք են աշխատուժի գծով ուղղակի ծախսումները, պատրաստի արտադրանքի վրա պարբերաբար բաշխվող հաստատուն և փոփոխուն արտադրական վերադիր ծախսումները, որոնք կատարվում են վերամշակելու ընթացքում:
Այլ ծախսումները ինքնարժեքում ներառվում են այն չափով, ինչքանով դրանք կատարվել են պաշարները ներկա գտնվելու վայր և պատշաճ վիճակի բերելու համար:

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ նախագծերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը հաշվարկվում է կոնկրետ արտադրանքի ինքնարժեքի որոշման ճանապարհով:
Փոխադարձ փոխարինելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջինը Մուտք՝ Առաջինը Ելք» (ԱՄԱԵ) մեթոդով:

Պաշարների ինքնարժեքի մեջ չեն ներառվում գերնորմատիվային ծախսումները, պահպանման ծախսումները, վարչական վերադիր ծախսումները և վաճառքի ծախսումները:

Պաշարները հետագայում չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքի ցանկացած իջեցման գումար մինչև իրացման զուտ արժեք և պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ դրանք տեղի են ունեցել:

Ոչ իրացվելի պաշարները դուրս են գրվում իրենց հաշվեկշռային արժեքով:

3.4 Վարձակալություն

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն բոլոր այն դեպքերում, երբ վարձակալության պայմաններով վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և հատույցները փոխանցվում են Ընկերությանը: Բոլոր այլ վարձակալությունները դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն:
Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվների նկատմամբ իրավունքները վարձակալության սկզբի դրությամբ ճանաչվում են որպես Ընկերության ակտիվներ՝ վարձակալված գույքի իրական արժեքով (կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե այն ավելի ցածր է): Վարձատուի համապատասխան պարտավորությունը ներառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն:
Վարձավճարները բաշխվում են ֆինանսական վճարների և վարձակալության պարտականության նվազեցման միջև այնպես, որպեսզի ստացվի հաստատուն դրույք՝ յուրաքանչյուր ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի նկատմամբ: Ֆինանսական վճարները հանվում են շահույթը կամ վնասը չափելիս: Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվները ներառվում են հիմնական միջոցներում և մաշեցվում են ու արժեզրկումից կորստի գծով գնահատվում են այնպես, ինչպես սեփականության իրավունքով պահվող ակտիվները:
Գործառնական վարձակալության գծով վճարման ենթակա վարձավճարները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ գծային հիմունքով, համապատասխան վարձակալության ժամկետի ընթացքում:

3.5 Շնորհներ

Շնորհները, ներառյալ ոչ դրամային շնորհները՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են իրական արժեքով որպես հետաձգված եկամուտ:

Շնորհը ճանաչվում է որպես եկամուտ՝ սիստեմատիկ եւ ռացիոնալ հիմունքով, ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերմանը վերաբերող շնորհները ներառվում են ոչ ընթացիկ պարտավորություններում եւ ճանաչվում են որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Հիմնադրամին տրված նվիրաբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում որպես եկամուտ այն տարում, երբ դրանք փաստացի ստացվել են:

Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերմանը վերաբերող շնորհները ներառվում են ոչ ընթացիկ պարտավորություններում եւ ճանաչվում են որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

3.6 Հատուցումներ աշխատակիցներին

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Աշխատակիցների հատուցումները աշխատակիցների, ներառյալ տնօրենները և կառավարչական անձնակազմը, մատուցած ծառայության դիմաց Կազմակերպության կողմից ցանկացած ձևով տրվող փոխհատուցումներն են: Աշխատակիցների հատուցումներն են.

ա) աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի ազատման նպաստներից), որոնք ամբողջությամբ մարվում են այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը.

բ) հետաշխատանքային հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի ազատման նպաստներից), որոնք ենթակա են վճարման աշխատանքային գործունեությունն ավարտելուց հետո.

գ) աշխատակիցների այլ երկարաժամկետ հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի հետաշխատանքային հատուցումներից և ազատման նպաստներից), որոնք ոչ ամբողջությամբ են մարվում այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը.

դ) ազատման նպաստներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են, որոնք ենթակա են վճարման որպես հետևանք կամ՝

- կազմակերպության որոշման՝ աշխատանքից ազատել աշխատակիցներին մինչև թոշակի անցնելու ընդունված ժամկետը, կամ
- աշխատակցի որոշման՝ աշխատակիցների թվաքանակի կրճատման դեպքում կամավոր ազատվել՝ փոխարենը ստանալով այդ նպաստները:

3.7 Պահուստներ

Կազմակերպությունը պահուստը պետք է ճանաչի միայն այն դեպքում, երբ

ա) կազմակերպությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ունի պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք.

բ) հավանական է (այսինքն՝ ավելի շատ հավանական է, քան՝ ոչ), որ մարելու համար կազմակերպությունից կպահանջվի փոխանցել տնտեսական օգուտներ.

գ) պարտականության գումարը կարող է արժանահավատորեն գնահատվել:

Կազմակերպությունը պահուստը պետք է ճանաչի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես պարտավորություն, և պետք է ճանաչի պահուստի գումարը որպես ծախս:

Կազմակերպությունը պահուստը պետք է չափի հաշվետու ամսաթվի դրությամբ պարտականությունը մարելու համար պահանջվող գումարի լավագույն գնահատականով: Լավագույն գնահատականն այն գումարն է, որը կազմակերպությունը խելամտորեն կվճարեր՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ այդ պարտականությունը մարելու կամ այդ պահին երրորդ կողմին փոխանցելու համար: Կազմակերպությունը պահուստի հաշվին պետք է մարի միայն այն ծախքերը, որոնց գծով պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.8 Շահութահարկ

Շահութահարկը ներկայացվում է ֆինանսական հաշվետվություններում համաձայն օրենսդրության, որն, ըստ էության, գործում է կամ ուժի մեջ է մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել կամ ստանալ տարվա հարկվող եկամտի կամ վնասի գծով՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկ չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ բիզնեսի միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում, որն ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված արձակուրդային պահուստների և դեբիտորական պարտքերի պահուստների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Կազմակերպությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթը որոշվում է հարկվող ժամանակավոր տարբերությունների մարումից առաջացող գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումներով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Հիմնադրամի գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այս նվազեցումները հակադարձվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթի առկայության հավանականությունը: Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այն չափով, որով հավանական է, որ Կազմակերպությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող է դրանք օգտագործվել:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Կազմակերպությունը տվյալ պահին ունի ունի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվներ զուտ հիմունքով, կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

3.9 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալից ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնց իրական արժեքի փոփոխությունները վերագրվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

I. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

4. Հիմնական միջոցներ

հազար դրամ	Հողամասեր	Շենքեր	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական, տնտեսական գույք	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	7,633	6,626	162	4,045	150	18,616
Ավելացում	-	-	-	-	-	-
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,633	6,626	162	4,045	150	18,616
Ավելացում	-	-	-	-	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,633	6,626	162	4,045	150	18,616
Կուտակված մաշվածություն						
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	-	599	162	264	54	1,079
Տարվա ծախս	-	331	-	506	30	867
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	930	162	770	84	1,946
Տարվա ծախս	-	331	-	506	30	867
2022թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	1,261	162	1,276	114	2,813
Հաշվեկշռային արժեք						
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,633	5,696	-	3,275	66	16,670
2022թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,633	5,365	-	2,769	36	15,803

Մաշվածության գծով ծախսը 2022թ. կազմել է 867 հազ. դրամ (2021թ. 867 հազ դրամ):

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 162 հազ. դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 162 հազ. դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով):

Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամի հիմնական միջոցների նկատմամբ սահմանափակումներ առկա չեն:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը հիմնական միջոցների ձեռքբերման գծով պայմանագրային պարտականություն չունի:

5. Պաշարներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ապրանքներ	1,756	2,883
Այլ պաշարներ	395	-
Անավարտ արտադրություն	113,120	99,620
	115,271	102,503

Պաշարների կազմում ներառված անավարտ արտադրության մնացորդը՝ 113,120 հազար ՀՀ դրամի չափով, իրենից ներկայացնում է «Լուսագյուղ գյուղի զարգացում» բարեգործական ծրագրի շրջանակներում Լուսագյուղ համայնքում կառուցվող մանկապարտեզի և դպրոցի շենքերի գծով շինարարական աշխատանքների արժեքները:

6. Դրամական միջոցներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ	-	-
Բանկային հաշիվեր (դրամային)	182	4,214
Բանկային հաշիվներ (արտարժութային)	9,630	17,219
	9,812	21,433

7. Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	16,670	17,537
Ստացված շնորհներ	-	-
Շնորհից եկամուտ	(867)	(867)
Տարեվերջի մնացորդ	15,803	16,670

8. Նվիրաբերությունից եկամուտներ

Նվիրաբերությունից եկամուտներն 2022թ.ընթացքում կազմել են 93,377 հազար ՀՀ դրամ (2021թ. ընթացքում՝ 14,841 հազար ՀՀ դրամ), որոնք իրենցից ներկայացնում են Հիմնադրամի ընթացիկ գործունեության և կանոնադրական նպատակների իրականացման համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից ստացված միջոցները:

9. Կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,353	265
Ստացված կանխավճարներ	-	-
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	-	201
Աշխատավարձի գծով պարտք	-	-
Արձակուրդի պահուստ	2,677	2,008
	4,030	2,474

10. Գործառնական ծախսեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
Աշխատանքի վարձատրության ծախսեր	8,433	8,256
Մաշվածության ծախսեր	867	867

Մասնագիտական և խորհրդատվական ծախսեր	3,240	3,360
Պահպանման ծախսեր	26,100	26,100
Շինարարական ծախսեր	12,717	-
Նվիրատվություններ և նվիրաբերություններ	42,183	4,914
Չփոխհատուցվող հարկեր	74	60
Արտարժույթի փոխարկումից ծախսեր	6,712	180
Այլ ծախսեր	1,066	2,001
	101,392	45,738

11. Այլ ֆինանսական հոդվածներ, զուտ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը		
Դրամական միջոցներ	6,118	(2,613)
	6,118	(2,613)

12. Ֆինանսական գործիքներ

12.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.9-ում:

12.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր		
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	9,812	21,433
	9,812	21,433

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,353	265
	1,353	265

13. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Հիմնադրամը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժութային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

13.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Հիմնադրամի գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է արտարժութային և այլ ռիսկերի (տես՝ բ) ստորև):

բ) Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Հիմնադրամի ստացված շնորհներից:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը ֆինանսական կորուստներ կարող է կրել:

Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ:

դ) Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

Հոդված 2022թ.	Հայկական դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի
Ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	182	8,009	1,621	-
	182	8,009	1,621	-
Ֆինանսական պարտավորություններ				
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,353	-	-	-
	1,353	-	-	-
Զուտ արդյունք	(1,171)	8,009	1,621	-

Հոդված 2021թ.	Հայկական դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի
Ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4,214	15,125	2,094	-
	4,214	15,125	2,094	-
Ֆինանսական պարտավորություններ				
Առևտրային կրեդիտորական պարտքեր	265	-	-	-
	265	-	-	-
Զուտ արդյունք	3,949	15,125	2,094	-

Հիմնադրամը ենթարկվում է ԱՄՆ դոլարի, Եվրոյի փոխարժեքի ազդեցությանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի, Եվրոյի դրամի 10% (2021թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2021թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով

արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2021թ.՝ 10%):

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն		Ռուբլու ազդեցություն	
	2022թ.	2021թ.	2022թ.	2021թ.	2022թ.	2021թ.
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	801	1,513	162	209	-	-

14. Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

15. Պայմանական պարտավորություններ

15.1 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Տնտեսական անբարենպաստ պայմանները և ներդրումների ցածր մակարդակը բացատրվում են նաև 2020թ.-ին Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած ռազմական բախումներով և դրանց հաջորդած հրադադարի ռեժիմի պայմանագրերով, ներքաղաքական անկայուն վիճակով և իհարկե նույն տարում ամբողջ աշխարհը ցնցած Չինաստանում բռնկված կորոնավիրուս (COVID-19) համավարակով՝ պետությունների կառավարությունների կողմից սահմանված կրկնակի արգելափակումներով:

Ուկրաինական հակամարտությունը նույնպես մեծ ազդեցություն կունենա ամբողջ աշխարհի վրա:

Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար: Հիմնադրամը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:
Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա:

2022թ.-ին Հիմնադրամը ունեցել է բավարար շրջանառու միջոցներ՝ ի հաշիվ ստացված նվիրատվությունների:

15.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիրառվում: Սա է պատճառը, որ Հիմնադրամն ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից: Քանի դեռ Հիմնադրամն ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Բացառություն են կազմում սեփականատերերի կողմից ավտոմեքենաների պարտադիր ապահովագրությունները, որոնք հատուցում են վթարի դեպքում երկրորդ կողմին պատճառված վնասները:

15.3 Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և այնքի է ընկնում

են հակասական կամ տարբնթերցումների տեղիք տալ: Հարկային մարմինները կարող են ստուգումների արդյունքում տույժ, տուգանքներ նշանակել: Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Կազմակերպության ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության՝ իր մեկնաբանությունների վրա: Սակայն հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հիմք ընդունած մեկնաբանություններից, և եթե դրանք հաստատվեն, ապա դրանց ազդեցությունը կարող է նշանակալի լինել:

15.4 Շրջակա միջավայրի հետ խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ Կազմակերպությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները, և վստահ է, որ Կազմակերպությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում, շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն և օրենդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

15.5 Դատական գործեր

2022թ. դեկտեմբերի 31-ի և սույն ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթվի դրությամբ Կազմակերպության դեմ հարուցված դատական հայցեր չկան:

15.6 Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել հաշվետու տարվանից հետո մինչև սույի ֆինանսական հաշվետվությունները վավերացնող ամսաթիվը ընկած ժամանակահատվածում:

16 Գործարքներ կապակցված կողմերի միջև

16.1 Վերահսկողություն

Հիմնադրամը վերահսկվում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից:

Ներկայացվող հաշվետվությունների առումով կապակցված կողմերն են նաև համատեղ հսկողության տակ գտնվող կազմակերպությունները, տնօրենը, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք:

Հիմնադրամի Խորհրդի անդամներ են հանդիսանում Գոռ Բաղալյանը, Վարդան Տողանյանը և Ալբերտ Ավդոյյանը:
Հիմնադրամն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ:

1.Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հազար դրամ	Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-դրությամբ		2022թ.	Մնացորդը 2021թ. դեկտեմբերի 31-դրությամբ
Նվիրաբերություններ	-	(93,377)	93,377	-
Շնորհներ	15,803	(867)	-	16,670
	Մնացորդը 2021թ. դեկտեմբերի 31-դրությամբ		2021թ.	Մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-դրությամբ
Նվիրաբերություններ	-	-	-	-
Շնորհներ	16,670	(867)	-	17,537

2. Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմը ներառում է այն անձանց, ովքեր իրավասու են և պատասխանատվություն են կրում Հիմնադրամի գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար: Հիմնադրամի կառավարչական անձնակազմը Գլխավոր տնօրենն է:

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	8,438	8,256
	8,438	8,256

ARMENIAN FUTURE

www.armenianfuture.com

info@armenianfuture.com

001 Northern ave.1Yerevan RA

Հիմնական միջոցների արժեզրկում

Համաձայն «Ակտիվների արժեզրկում» ՀՀՄՍ 36-ի, 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը գնահատել է, թե արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել:

Հիմնական միջոցը արժեզրկված է, երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Որպես արժեզրկման հայտանիշ դիտարկվել է.

Տեղեկատվության արտաքին աղբյուրներ

ա) թե արդյոք տվյալ ժամանակաշրջանի ընթացքում ակտիվի շուկայական արժեքը նվազել է զգալիորեն ավելի մեծ չափով, քան կակնկալվեր որոշակի ժամանակ անցնելու կամ սովորական օգտագործման արդյունքում,

բ) թե արդյոք տվյալ ժամանակաշրջանի ընթացքում տեղի են ունեցել կամ մոտ ապագայում տեղի կունենան հիմնադրամի համար անբարենպաստ հետևանք ունեցող նշանակալի փոփոխություններ այն տեխնոլոգիական, շուկայական, տնտեսական կամ իրավական միջավայրում, որտեղ գործում է այդ հիմնադրամը, կամ այն շուկայում, որի համար նախատեսված է տվյալ ակտիվը,

գ) թե արդյոք տվյալ ժամանակաշրջանի ընթացքում տոկոսադրույքները կամ ներդրումների շուկայական այլ հատույցադրույքներ աճել են, և հավանական է, որ այդ աճը կազդի զեղչման դրույքների վրա, որոնք կիրառվում են ակտիվի օգտագործման արժեքը հաշվարկելիս, և էականորեն կնվազեցնի ակտիվի փոխհատուցվող գումարը,

դ) թե արդյոք հիմնադրամի զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա շուկայական կապիտալացումը:

Տեղեկատվության ներքին աղբյուրներ

ե) թե արդյոք վկայություն կա ակտիվի բարոյական մաշվածության կամ ֆիզիկական վնասվածության վերաբերյալ,

զ) թե արդյոք տվյալ ժամանակաշրջանի ընթացքում տեղի են ունեցել կամ ակնկալվում է, որ մոտ ապագայում տեղի կունենան հիմնադրամի համար անբարենպաստ ազդեցություն ունեցող նշանակալի փոփոխություններ ակտիվի ներկա կամ ակնկալվող օգտագործման աստիճանի (ինտենսիվության) կամ եղանակի մեջ: Այս փոփոխությունները ներառում են ակտիվի պարապուրդի մատնվելը, այն գործառնությունների ընդհատման կամ վերակառուցման ծրագրերը, որոնց պատկանում է տվյալ ակտիվը, ակտիվը նախապես ակնկալվող ամսաթվից շուտ օտարելու ծրագրերը և ակտիվի օգտակար ծառայությունը՝ անորոշի փոխարեն որպես սահմանափակ վերանայելը:[1]

է) թե արդյոք ներքին հաշվետվական համակրգը վկայում է, որ ակտիվի տնտեսական ցուցանիշները ավելի ցածր են կամ կլինեն ավելի ցածր, քան ակնկալվում էր:

Այսպիսով, առկա չէ որևէ արժեզրկման հայտանիշ, հետևաբար անհրաժեշտություն չկա կատարել ակտիվի փոխհատուցվող գումարի գնահատում:

Տնօրեն՝

Գլխավոր հաշվապահ՝

Ամսաթիվ՝ 16 մայիս 2023թ

ARMENIAN
FUTURE

www.armenianfuture.com
info@armenianfuture.com
001 Northern ave.1Yerevan RA

«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ

Տնօրեն՝ Աննա Ավետիսյանին

Հավաստումների սույն գրությունը ներկայացվում է Արմենիան Ֆյուչր Բարեգործական Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կատարվող ՓՄԿ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների աուդիտի կապակցությամբ, որի նպատակն է հնարավորություն տալ կարծիք արտահայտելու այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի վերաբերյալ բոլոր էական առումներով ճշմարիտ և իրական պատկերը, համաձայն ՓՄԿ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին:

Հավաստում ենք, որ

Ֆինանսական հաշվետվություններ

- Մեր կողմից կատարվել են 2023թ. մարտի 16-ին կնքված աուդիտի պայմանագրի պայմաններով նախատեսվող պարտականությունները՝կապված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման հետ՝ մասնավորապես, ֆինանսական հաշվետվությունները, վերոնշյալ ստանդարտների համաձայն արտացոլում են իրական և ճշմարիտ պատկերը,

- Հաշվապահական հաշվարկների, այդ թվում իրական արժեքի վրա հիմնվող հաշվարկների կատարման ժամանակ մեր կողմից կիրառված նշանակալից ենթադրությունները ողջամիտ են, (ԱՄՍ 540)

- Կապակցված կողմերի հետ հարաբերությունները և գործարքները համապատասխանորեն հաշվառվել են և բացահայտվել ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան, (ԱՄՍ 550)

- Բոլոր իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել ֆինանսական հաշվետվությունների ամսաթվից հետո և որոնց առնչությամբ ֆինանսական

հաշվետվությունների միջազգային ստանդարտներով պահանջվում է ճշգրտում կամ բացահայտում, ճշգրտվել են կամ բացահայտվել, (ԱՄՍ 560)

- Ֆինանսական հաշվետվությունների վրա չուղղված խեղաթյուրումների ազդեցությունը (առանձին և միասին վերցված) էական չէ:

- Մենք չունենք այնպիսի պլաններ կամ մտադրություններ, որոնք կարող են էապես փոփոխել ֆինանսական հաշվետվություններում արտացոլված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները և դասակարգումները:

- Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ակտիվները սեփականության իրավունքով պատկանում են Հիմնադրամին:

- Մենք գրանցել և բացահայտել ենք բոլոր պատասխանատվությունները, ինչպես փաստացի, այնպես էլ պայմանական:

Տրամադրված տեղեկատվություն

- Ձեզ է տրամադրվել.

  - Ֆինանսական հաշվետվությունների կազմման համար կարևոր նշանակություն ունեցող և մեզ հայտնի տեղեկատվությունից, օրինակ, գրանցումներից, փաստաթղթերից և այլ հայտնի նյութերից օգտվելու հնարավորությունը,

  - Աուդիտի նպատակներով ձեր կողմից պահանջվող լրացուցիչ տեղեկատվությունը, և

  - Աուդիտորական ապացույցներ հայթայթելու նպատակով կազմակերպության բոլոր համապատասխան աշխատակիցների հետ հանդիպումներ ունենալու ազատ հնարավորությունը,

  - Բոլոր գործարքները արտացոլված են հաշվապահական հաշվառման գրանցումներում և ֆինանսական հաշվետվություններում:

- Մեր կողմից ձեզ են բացահայտվել խարդախության արդյունքում ֆինանսական հաշվետվությունների տվյալների էական խեղաթյուրման հետ կապված ռիսկի գնահատման արդյունքները, (ԱՄՍ 240)

- Մենք տեղյակ չենք խարդախության կամ կասկածելի խարդախության որևէ դեպքի մասին, որը կազդի Հիմնադրամի վրա և որում ներգրավված են՝

  - ղեկավարությունը,

- Ներքին հսկողությունում նշանակալից դերակատարություն ունեցող աշխատակիցների հետ
- Այլ անձինք, եթե խարդախության դեպքը կարող է էական ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա, (ԱՄՍ 240)

- Մենք տեղյակ չենք որևէ խարդախության մեղադրանքի կամ կասկածելի խարդախության դեպքերի վերաբերյալ, որը կազդեր ֆինանսական հաշվետվությունների վրա, և որի մասին մենք տեղեկացել ենք աշխատակիցներից, նախկին աշխատակիցներից, վերլուծաբաններից, կարգավորող մարմիններից կամ այլ անձանցից:

- Մեր կողմից ձեզ են բացահայտվել օրենքների և ենթաօրենսդրական ակտերի պահանջների խախտման բոլոր այն հայտնի կամ կասկածելի դեպքերը, որոնց ազդեցությունը պետք է հաշվի առնվի ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ, (ԱՄՍ 250)

Տնօրեն՝

Գլխավոր հաշվապահ՝

«ԱՐՄԵՆԻԱՆ ՖՅՈՒՉՐ»
"ARMENIAN FUTURE"
"АРМЕНИАН ФЮЧЕР"
02680994

16 մայիս 2023թ.

ARMENIAN
FUTURE

www.armenianfuture.com
info@armenianfuture.com
001 Northern ave.1Yerevan RA

«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ

Տնօրեն՝ Աննա Ավետիսյանին

Իրավաբանի նամակ

Հայտնում ենք Ձեզ, որ 2022թ. դեկտեմբերի 31-ի և սույն ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթվի դրությամբ Արմենիան Ֆյուչր Բարեգործական Հիմնադրամը չունի դատական գործընթացներ:

Տնօրեն՝

Իրավաբան

Գլխավոր հաշվապահ՝

16 մայիս 2023թ.

ARMENIAN
FUTURE

www.armenianfuture.com
info@armenianfuture.com
001 Northern ave.1Yerevan RA

Հիմնական միջոցների մնացորդային արժեքների և օգտակար ծառայության ժամկետների վերանայում

Համաձայն «Հիմնական Միջոցներ» ՀՀՄՍ 16-ի, 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերանայվել են Հիմնադրամի հիմնական միջոցների մնացորդային արժեքները և օգտակար ծառայության ժամկետները:

Հիմնական միջոցների մնացորդային արժեքները գործնականում գնահատվում են ոչ էական և հաշվապահական ծրագրում գրանցվում են զրոյական արժեքով: Քանի որ հիմնական միջոցի մնացորդային արժեքը գնահատվել է ոչ էական, հետևաբար մաշվածության գումարը հաշվարկելիս մնացորդային գումարը հաշվի չի առնվում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները գնահատելիս հաշվի է առնվել.

- Հիմնական միջոցի օգտագործելիության հնարավորությունը,
- Հիմնական միջոցի ֆիզիկական մաշվածությունը,
- Հիմնական միջոցի տեխնիկական կամ կոմերցիոն հնացածությունը,
- Հիմնական միջոցների օգտագործման իրավական սահմանափակումները (օրինակ՝ վարձակալության ժամկետի ավարտը):

Այսպիսով ակնկալիքները չեն տարբերվում նախորդ տարվա գնահատումներից, որոնք ամրագրված են Ընկերության «Հաշվապահական Հաշվառման քաղաքականությամբ»:

Տնօրեն՝

Գլխավոր հաշվապահ՝

«ԱՐՄԵՆԻԱՆ ՖՅՈՒՉՐ»
"ARMENIAN FUTURE"
"АРМЕНИАН ФЮЧЕР"
02680994

Ամսաթիվ՝ 16 մայիս 2023թ.

ARMENIAN
FUTURE

www.armenianfuture.com
info@armenianfuture.com
001 Northern ave.1Yerevan RA

ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐ

«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ
Տնօրեն՝ Ա. Ավետիսյանին

Համաձայն ԱՄՍ 550 «Կապակցված կողմեր» ստանդարտի պահանջների Ձեզ ենք ներկայացնում Արմենիան Ֆյուչր Բարեգործական Հիմնադրամի փոխկապակցված անձանց ցանկը, փոխհարաբերությունների բնույթը և նրանց հետ կատարված գործարքների բնույթն ու նպատակը.

Փոխկապակցված անձի անվանում	Փոխկապակցվածության բնույթը	Կատարված գործարքների բնույթն ու նպատակը
Բաղալյան Մերուժան	Գործադիր տնօրենի ժպ	Աշխատավարձ
Ավդոյան Ալբերտ	Հիմնադիր, հոգաբարձուների խորհրդի անդամ	Նվիրաբերող
Տողանյան Վարդան	Հիմնադիր, հոգաբարձուների խորհրդի անդամ	
Բաղալյան Գոռ	Հոգաբարձուների խորհրդի նախագահ	

Տնօրեն՝

Գլխավոր հաշվապահ՝

«ԱՐՄԵՆԻԱՆ ՖՅՈՒՉՐ»
"ARMENIAN FUTURE"
"АРМЕНИАН ФЮЧЕР"
02680994

16 մայիս 2023թ.

ARMENIAN
FUTURE

www.armenianfuture.com
info@armenianfuture.com
001 Northern ave.1Yerevan RA

Տեղեկանք

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրությամբ Արմենիան Ֆյուչր Բարեգործական Հիմնադրամը չունի գրավադրված պաշարներ, արժեթղթեր և այլ գրավներ:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 162 հազ. դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով:

Հիմնադրամի աշխատողների տարեկան միջին թիվը կազմել է 1 մարդ:

Հիմնական ղեկավար անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդը 2022թ. կազմել է 8,438 հազ. դրամ:

Տնօրեն՝ .....

Գլխավոր հաշվապահ՝ .....

«ԱՐՄԵՆԻԱՆ ՖՅՈՒՉՐ»
"ARMENIAN FUTURE"
"АРМЕНИАН ФЮЧЕР"
02680994

Ամսաթիվ՝ 16 մայիս 2023թ.

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 02.06.2023 13:01